ՆՈՐ-ԴԱՐ

№ 78 ՏԱՍՆԵՒԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ Շաբաթ 4 Մայիսի 1896 Շաբաթ 4 Մայիսի ՏԱՍՆԵՒԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ № 78

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
ամիսը՝ 1 ր., հատով՝ 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ"
կամ Tiflis Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից
մինչև 2-ը: Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով:
Յայտարարութիւնների բառն 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.— Ազատամտութեան դիմակի տակ:

Քրոնիկոն.— Թագադրութեան տօնելու կարգը: Ռուս գաղութներ: Բոլնիսի ուխտատեղին: Նոր հարկ գիւղացիների համար: Մեղրամոմի վերահսկիչներ: Օրինակելի որդնարան: Հանքային ուսումնարան: Հայոց թատրոն: «Արարատ» ամսագիրը: «Արարատ»-ի գործակալ Ճուղայից: Գանձակից: Նոր-Նախիջևանից: Նոր հրատարակութիւններ:

Երևանի վիճակի լեռնային գաւառների եկեղեցիները:

Մամուլի շուրջը:

Թղթակցութիւններ.— Նամակ Թիւրքիայից — Կ. Պոլիս:

Քաղաքական.— Վերջին տեղեկութիւններ Թիւրքիայի գործերի մասին: Պարսկաստան: Իտալիա:

Հեռագրներ:

Բանասիրական.— Եւրոպական արդի գրականութիւնը:

Տեղեկատու:

Յայտարարութիւններ:

Թիֆլիս, 3 մայիսի, 1896 թ.

ԱԶԱՏԱՄՏՈՒԹԵԱՆ ԴԻՄԱԿԻ ՏԱԿ

Մարդկային ազգի պատմութիւնը լի է բազմաթիւ օրինակներով, ուր այս կամ այն անհատը, մէկ կամ միւս հասարակութիւնը զանազան նպատակներով ու դիտումներով աշխատել են սահմանափակել որևիցէ անհատի օգտակար գործունէութիւնն և բնատուր իրաւունքների սահմանը: Խիստ շատ անգամ բռնակալ անհատի կամ ամբողջ փարչութեան ապօրինի ձգտումներին միացել են բռնութիւն, կոպիտ ոյժ, հալածանք սոսկալի պատիժներ և այլն, և այլն, և այդ ամենը՝ միմիայն տիրելու, ստրկացնելու, բնատուր իրաւունքների գործադրութիւնը բռնելու նպատակով: Արևելեան և արևմտեան ազգերի հին ու միջին դարերի պատմութիւնը լի է բռնութեան գործադրութեան և նրա տարած յաղթանակներով:

Բայց ամեն անգամ որ մարդկանց մէջ նկատուել է զարթելու, հզօրակենալու, յափշտակելու ոգին, նրան զուգընթաց հակառակ կողմի մէջ երևան է եկել իր իրաւունքները, պատիւը, անունը, ստացուածքը պաշտպանելու ձգտումը, իր օգտակար նպատակներն ու ձեռնարկութիւնները հովանաւորելու ոգին: Ահա անհատի և հասարակութիւնների մէջ հանդէս եկած իր եսը պաշտպանելու, իր բնատուր իրաւունքները ապահովելու ոգին է, որ կոչւում է ազատամտութիւն—Լիբերալիզմ:

Մարդկային բնաւորութեան այդ երկու հակառակ ձգտումների ընկերքը նոյնքան հին է, որքան հին է ինքը մարդկութիւնը. դրանք միմեանց միշտ թշնամի, միշտ կռուի մէջ են եղել, և այդ կռւին է, որ ազատելով երկու ծայրայեղութիւններից, մարդկութիւնը դրել է միջին, բարեխառն ճանապարհի վրայ և հասցրել ԺԹ-րդ դարի ներկայ բարձր կուլտուրային:

Ազատամտութեան վերաբերմամբ այդ հակիրճ բացատրութիւնը տալուց յետոյ, դառնանք մեր այս տողերը գրելու նպատակին:

Մեր մամուլի որոշ օրգանների էջերում և հասարակութեան մի մասի մէջ խիստ յաճախ կլկլատահէր ազատամտութիւն բառին: Եւ իսկապէս, էլ ով չէ մեզանում ազատամիտ, սկսած համալսարանականից՝ մինչև գիւղական յետին տիրացուն, այս կամ այն ուսումնարանից անբաւարարականութեան կամ ծուլութեան համար արտաքսուած դպրոցական պատանին, ինչպէս և փողոցի կինտօն... Դրանք ամենքն էլ ազատամիտ են, դրանք ամենքն էլ հնապաշտութեան, խաւարամտութեան դէմ են կռւում: Սակայն ով է խաւարամիտը, և ինչ բանումն է նրանց խաւարամտութիւնը,—երևի՝ ազատամտութեան այդ հերոսներն էլ չգիտեն:

Ճշմարիտ ասած, մեծ ուրախութիւն էր մեզ համար մեր մէջ տեսնել ազատամտութեան ձգտում և ազատամիտներ այն մտքով, ինչ մտքով որ այսօր գործ է ածւում այդ մեզանից քաղաքակրթութեամբ շատ բարձր կանգնած ազգերի մէջ: Բայց դժբաղդաբար, մեր հասարակական կեանքի հարևանցի ուսումնասիրութիւնը ուշադիր և ուղղամիտ հետազօտի առաջ բաց է անում այնքան տխուր և արգահատութեան արժանի մի տեսարան, որ կրկին և կրկին ապացուցանում է, թէ մեր մէջ բուն գրածը ոչ թէ իսկական ազատամտութիւն է, այլ նրա կեղծիքը, նրա այլանդակ ապականումը, ազատամտութեան ամենակեղտոտ տեսակը:

Մի օրգան, որ շատ վարպետ է միամիտ հասարակութեան աչքին թող փչելու մէջ, առանց քաշուելու, առանց համեստութեան դէմ մեղանչած լինելու իրեն անուանում է ազատամիտ, լուսամիտ. իսկ թէ ինչումն է կայանում այդ մարդկանց ազատամտութիւնը,—ոչ մի անգամ չի յաջողուել մեզ գոհացուցիչ պատասխան ստանալ այդ մասին: Հետևում ես մեր այս կամ այն բարձրագոյն ուսումնարանական հաստատութեան մէջ առաջացած խառնակութեան, և զարմանքով տեսնում ես, որ այդ խեղճ, անփորձ պատանիների հանգիստը վրդովողները, ապագան վտանգողները, ամբողջ հաստատութիւնը տակնուվրայ անողները նոյն իրեն ազատամիտ անուանող «թայֆայի» ազնուականներն են. մեռնում է ամենքից յարգուած մի բարձրաստիճան հոգևորական, ահա ամենքից առաջ նրա յիշատակին ցեխ շպրտողը դարձեալ միևնոյն «թայֆան» է. Հետևում ես հասարակական այս կամ այն հաստատութեան, և արդար բարկութեամբ լցուած հանդիսատես ես լինում անօրինակ կամայականութեանց ու աչառութեանց, որոնք գործւում են օրը ցերեկով, ամենքի աչքի առաջ. ցաւօք սրտի դիտում ես, թէ ինչպէս այդ հաստատութիւնը օրէցօր ընկնում է և խամրում այդ միևնոյն «թաֆայի» մահացնող ճիրանների մէջ. ձեռնարկւում է այս կամ այն հոգաբարձուական ընտրութեան,—ազատամտութեան այդ խրտուիլակների առաջ բացւում է գործունէութեան ընդարձակ դաշտ, օձի նման սողալով, սպրդում են միամիտ ամբոխի մէջ և առանց խղճահարուելու գործիք շինում նրան իրենց անազնիւ նպատակներին:

Եւ այդ ամենը գործւում է գիտակցաբար, յանուն «ազատամտութեան», յանուն «լուսամիտ երիտասարդութեան»:

Բայց, ասացէք խնդրեմ, ո՞ր մէկ բարեկարգ հասարակութեան մէջ կարող է անհատի և ամբողջ մի հասարակութեան իրաւունքների վրայ բռնանալը ազատամտութիւն անուանուել, մի օգտակար հանրային հաստատութիւն քայքայելու ջանքերը, լուսամտութիւն հրատարակուել... Մենք գոնէ դժուարանում ենք բացի մեզանից մի ուրիշ հասարակութիւն մատնացոյց անել, որի մէջ այդ ամեն զեղծումներն ազատամտութիւն անունը կրելու յանդգնութիւնը ունենան: Մեր մէջ, այո, մեր մէջ միայն կարող են այդ փարիսեցիական ձեռնարկները ազատամտութեան դիմակի տակ թաք-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

(Վերջ, տես «Նոր-Դար» № 76):

Իբսէնն ու Բեօրնսոնը նորվեգիացիների ազգային բնաւորութեան բնորոշ տիպերն են կազմում, բայց Բեօրնսոնը իր բնաւորութեամբ, իր գրուածքներով մարմնացնում է այն բոլորը, ինչ որ լուսաւոր, զուարթ կայ նորվեգիացու հոգու մէջ. մինչդեռ Իբսէնը ներկայացնում է այն խոր հովիտների մռայլ բնակիչներին, որոնց հորիզոնը սահմանափակ է, իսկ հոգին վրդով: Զարմանալի ժողովուրդ են նորվեգիացիները: Նրանց մեծ մասը ծածկամիտ է, սակաւախօս, ունին մետաֆիզիքական, փորձող խելք: Նրանք ուրիշ ազգերից հեռու են ապրում, նրանց յարաբերութիւնը շատ սահմանափակ է ուրիշ ազգերի հետ, այն խնդիրները, որ դեռևս նրանց գիւղերում ընդհանուր հետաքրքրութեան առարկայ են կազմում, վաղուց դադարել են ուրիշ ազգերին հետաքրքրելուց: Նրանք դեռևս կարող են բուռն կիրքով գրաւուել սուտ քրիստոսի գալու գուշակութեան խնդրով:

Իբսէնը ժողովրդի հենց այդպիսի դասակարգից է դուրս եկել, նա կարիք է զգում երևակայութեամբ զբաղուելու, ուստի և նա սիրում է խօսել անորոշ, հանելուկներով: Իբսէնը, նման է անգլիական գրող Ջօն Բրօունինգին, ընդունակութիւն ունի խօսելու բոլորովին անհասկանալի կերպով, նա, այսպէս ասած, ալքիմիական նշաններով է գրում, որոնցից ամեն մէկը, առ առկան, կարող է տասը միտք ունենալ: Մի տեղ Իբսէնն ասում է, թէ գրել նշանակում է իր վրայ Աստուծու դատաստանն անել: Շատ դժուար չէ այդպիսի խորին ճշմարտութիւններ արտայայտել. մինչդեռ Իբսէնի զարգարուն պափոսի մէջ չափազանցրած նշանակութիւն էին տեսնում:

Իբսէնը ի բնութենէ երևակայող է, իսկ նրան իմաստուն, մածաղ են կարծում: Նա պարծենում է Ցայտնութեան նմանութեամբ հանելուկներով, մինչդեռ նրան հրատարակեցին մեր ժամանակի ամենախոր խելքի տէր ունեցող մարդ:

Իբսէնը երիտասարդութեան միջոցին դանիական գրող Սեօրէն Կիէրկհարդի զօրեղ ազդեցութեան տակ է եղել: Ամբողջ աշխարհին այնպիսի նշանաւոր խնդիրներ, ինչպէս է հաւատի և գիտութեան միութիւնը, մեղքի ու Աստուածային շնորհի, ճակատագրի ու մարդու յարաբերութիւնները, շատ են զբաղեցրել Իբսէնին: Նա իր հինգ գործողութիւնից բաղկացած պիէսների մէջ մշակել է այդ խնդիրները և վերջ ի վերջոյ անպատասխան թողել: Ահա նրա նպատակը, որպէս գրողի: Իսկ որպէս մտածող նա ինքն իրեն համարում է միայն գլխատանող, սիրող, որովհետև շատ լաւ հասկանում է իսկական մտքի և ընդհանուր դատողութիւնների մէջ եղած տարբերութիւնը:

Իբսէնի ամենանշանաւոր երկը «Peer gynt» ոտանաւորով գրած դրամատիքական պօէմն է, որ Փաուստի պէս մի բան է:

Դա շատ հարուստ է մանրամասնութիւններով, բայց բաւական աղքատ է մտքի կողմից, գրուած է խելօք, փայլում է սրամտութեամբ: Ձևի կողմից անբիծ է այդ գրուածքը: Ի դէմս Peer Gynt-ի (դրաման հերոսի անունով է կոչւում) Իբսէնը աշխատում է նորվեգիացւոց ազգային պակասութիւնը նկարագրել և պատժել: Պօէմն շատ հետաքրքիր է, բայց ինչպէս իր նպատակին չէ հասնում, որովհետև միևնոյն պակասութիւնները, որ նորվեգիացիներն ունին, ունին նաև ուրիշ ազգերը: Դա ինքնագոհութիւնն է: Յայտնի չէ, թէ ինչու Իբսէնն այդ յատկութիւնը յատկապէս իր հայրենակիցներին է վերագրում: «Peer Gynt» պօէման զօրեղ զգացումներ է արտայայտում. Նրա մէջ ամեն մի զգացողութիւն լայն և զօրեղ գծերով է գծուած... Հեղինակի մռայլ, բարդ անձնաւորութիւնը երևում է այդ երկի մէջ. Նրա մէջ երևում է նրա խելքը, որ տրամադիր է զատելու, պատրաստ է մաքառելու ամեն տեսակ մետաֆիզիքական խնդիրների դէմ:

Իբսէնի ոտանաւորը զօրեղ է և որոշ չափով էլ բիրտ. Նրա մէջ ոչ փափկութիւն կայ, ոչ քնքշութիւն: Նրա հնչիւնը պղնձի է, և նուրբ անուշահոտութիւն չի բուրում:

Որպէս դրամատիքական հեղինակ Իբսէնը թատրոնին բազմաթիւ դրամաներ պիէսներ է տուել—«Հասարակութեան հիմունքները», Երիտասարդութեան միութիւնը», «Խամաճիկի տունը», «Տեսիլք» և այլն: Իբսէնն այս բոլորն էլ իր երիտասարդութեան միջոցին է գրել: Բայց դրանք չէին նրան Անգլիայում և Գերմանիայում հռչակ ստեղծողները, այդ երկերի համար չէր, որ նրան համարում էին Պարիզում մեծ: Նա իր արտասահմանեան բոլոր հռչակը ստացաւ վերջին տասը տարուայ ընթացքում գրած երկասիրութիւններով, չնայելով որ դրանց մէջ հեղինակը յետ է գնացել թէ տեխնիկայի և թէ երևակայութեան ոյժի կողմից: Անհասկանալի է, թէ ինչու Անգլիան ու Գերմանիան այդպէս գրաւուած են նրանով: Եթէ ուշադրութեամբ կարդալու լինենք Իբսէնի առաջուայ գրածները, այն ժամանակ համարեա թէ ծիծաղներս պիտի գայ այն աղմուկի վրայ, որով կարողացել է Իբսէնը վերջին տարիներս իրեն շրջապատել: Միթէ յայտնի չէ, թէ ո՞ր ճանապարհով է ծնւում այդպիսի ոգևորութիւնը: Մի լրագիր գովաբանութիւն է գրում, երկրորդը կրկնում է նրա խօսքերը, ապա երրորդը և այլն: Հենց իմանաս մարդկութիւնն ուզում է ինքն իր վրայ ծիծաղել. ահա նա սկսել է աչքակապուկ խաղալ:

Իբսէնը միշտ էլ մութը գրող է եղել իսկ այդ վերջին տարում խօ աւելացել է այդ: Այժմս նա այնքան մութը, այնքան «խորն է» մտածում, որպէս երբէք չի եղել. կարելի է կարծել, թէ Իբսէնը յատուկ գերմանացիների համար է գրում, մի ազգի, որը, ինչպէս յայտնի է, շատ ջանասէր է և ոչ մի դժուարիմաց մառախլամտութիւնից չի վախենում:

Տասը տարուայ ընթացքում Իբսէնը սօցիալական դրամաներ է ստեղծում, որոնց մէջ այնպիսի կեանք, այնպիսի բանաստեղծութիւն է տիրում, որպիսին ոչ մի տեղ չկայ. բայց այդ հերիք չէ, նա ինքը իմաստուն է դարձել, պատգամախօս, սփինքս, գրում է այլաբանութիւններ, միստերիաներ, նշանաբանութիւններ, և ամեն տարի հասարակութեան առաջարկում է մի կարգ վճռելի խնդիրներ, որոնք լի են «մեր ժամանակի ամենախոր մտածմունքներով»:

Իբսէնը—նշանախօս (սիմվոլիստ) է: Նա շատ չոր գրող է, նրա ներքին կեանքը ցամաք է, անմատչելի: Այդ կողմից նրա մի քանի փորձերը շատ ծիծաղելի են: Կոպենհագենի ազգային թատրոնում բարձրաբերձ ծիծաղում են նրա վրայ, բայց կարդալով նրա երկու և հինգ գործողութեամբ երկերը, չես իմանում ծանծաղութիւնից ուր փախչես. Իսկ Անգլիայում ու Գերմանիայում նախապաշարմամբ զգացմունքով լսում են նրա զգացմունքները և անհնարին խորն են համարում դրանց: Ահա թէ որ աստիճանի զանազան են լինում մարդիկ:

—

Նորվեգիայի գրականութեան մէջ բոլորովին տարբեր տեղ է բռնում Կիլանդը. Նա բացառապէս քաղաքական փոքրիկ քաղաքի կեանքն է նկարագրում:

Կիլանդը ապրել է Պարիզում. ապա երեսուն տարի առաջ հրապարակ իջաւ փոքրիկ նովելլաներով, իսկ դրանից յենուել, մեր հասարակութիւնը միայն ընդունակ է համբերութեամբ տանել այդ կեղծ պատառմութեան թանձր վարագոյրի ետեւում կատարուած խեղկատակութիւնները և չպոկել այդ անհամեստ դէմքերից նրանց տարիներով կպած դիմակը։

Սակայն մարգարէ լինելու պէտք չկայ գուշակելու համար, թէ այդ այդպէս շարունակուել չի կարող, և վերջապէս պիտի հասնի այն օրը, երբ դիմակները ընկնելով, այդ մարդիկ և իրենց գործերը պիտի երևան գան իւրեանց ամբողջ այլանդակութեամբ։

Ցանկալի էր միայն, որ այդ օրը շատ չուշանար, որովհետև որքան ուշ, այնքան մեծ է կորուստը։

ՔՐՈՆԻԿՈՆ

Հրատարակուած է Բարձրագոյն հաստատուած հետևեալ կարգը թագադրութիւնը կայսրութեան մէջ տօնելու մասին։

Նորին Կայսերական Մեծութիւնների սրբազան թագադրութեան նախօրը, մայիսի 13-ին, երեկոյեան հսկումն է կատարւում բոլոր մեծ քաղաքների աւագ եկեղեցիներում, նմանապէս և գաւառական ու գիւղական եկեղեցիներում։ Թագադրութեան օրը, մայիսի 14-ին, մեծ քաղաքների աւագ եկեղեցիներում, և գաւառական ու գիւղական եկեղեցիներում պատարագ է մատուցւելու։ Երբ նահանգապետները ներքին գործերի կամ զինուորական մինիստրից հեռագիր ստանան թագադրութիւնը Մոսկւայում կատարուելու մասին, քաղաքների բոլոր եկեղեցիներում գոհաբանական մաղթանք է կատարւում և սկսւում է զանգահարութիւն, որ շարունակւում է երեք օր։ Նոյն օրը Կայսերական պալատի մինիստրութիւնը աղքատների համար ճաշ է սարքում հետևեալ քաղաքներում՝ Վարշաւում, Կիևում, Կազանում, Թիֆլիսում, Տաշքենդում, Նիժնի-Նովգորոդում, Իրկուտսկում, Հելսինգֆորսում, Նովաչերկասկում, Տոմսկում, Արխանգելսկում, Կաստրամայում, Նովգորոդում, Վլադիվոստոկում, Ցարսկոյէ Սելօյում, Պետերհոֆում, Գատչինոյում, Բարնաուլում և Ներչինսկում։ Բնակիչներին է թողնուած իրենց տները զարդարել և լուսավառել թագադրութեան օրը և հետևեալ երկու օրերը։ Թոյլ է տրւում թագադրութեան օրը երեկոյեան ժողովրդական տօնախմբութիւններ և զբօսանքներ սարքել։ Վարչական տները փակւում են երեք օր։

—

Սև-ծովի լեռնային մասում ռուս գաղթներ հաստատելու համար, երկրագործութեան մինիստրութեան յանձնարարութեամբ, այդ մասում կլիմայական և երկրաբանական տեսակէտից կատարուող հետազօտութիւնը վերջանում է ներկայումս։ Ռուս ծագում ունեցող մարդկանց Սև-ծովի շրջանում արքունական հողեր տալու համար կանոնների ծրագիրն արդէն քննուած է պետական խորհրդի մէջ։

—

Հաստատ աղբիւրից մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի երկաթավաճառ պ. Գէորգ Մ. Ցախովեան, Բագալ Ոսկիբէկեան, Նիկոլայ Վարդանբարեան, Ալէքսանդր Պետրովիչ Ակորով, Յովսէփ Իգիթխանեան և Արուլաձէ ու Խաբայե վաճառականները ապրիլի 30 ին խնդրամատոյց են եղել, թեմիս հոգևոր կառավարչի միջնորդութեամբ, ներսէսեան դպրոցի հոգաբարձութեան, խնդրելով իրաւունք տալ իրենց Բօլնիսի ս. Գէորգ ուխտատեղում, որի տօնը կատարւում է ամենայն տարի նոյեմբերի ամսի 14-ին, կառուցանելու տասն ընդարձակ սենեակներ ուխտաւորների համար։

Շինութեան ծրագիրն արդէն պատրաստ է, իսկ հարկաւորուած նիւթերի պատրաստութիւնն էլ տեսնւում է։ Սենեակների կտուրը ծածկուած կլինի երկաթէ թիթեղով։ Պ. Գ. Ցախովեանը, որ այս գործի նախաձեռնողն է, յանձն է առել իւր ծախքով շինելու երեք սենեակ, Ոսկիբէկեան, Վարդանբարեան, Ակորով և Իգիթխանեան իւրաքանչիւրը մի սենեակ, իսկ Արուլաձէ և Իլիա Խարայեք միասին մի սենեակ. մնացած երկու սենեակի համար էլ յիշեալ պայմանները խնդրագրի մէջ յանձըն են տալ ուրիշ բարեգործներ գտնելու։

—

Տօնավաճառանոցներում և բազարային հրապարակներում բռնուող տեղերի համար վճար սահմանելու խնդիրը, որ լուրջ նշանակութիւն ունի կայսրութեան գիւղական բնակիչների համար, ներքին գործերի մինիստրն առաջարկել է նահանգապետներին, որ նրանք այդ խնդիրը քննութեան ենթարկեն զանազան հաստատութիւնների ներկայացուցիչներից իրենց նախագահութեամբ կազմուած առանձին խորհուրդների մէջ։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի քահանաները մեղրամոմերի վրայ հսկելու համար իրենց կողմից իբրև վերահսկողներ առաջարկել են կոնսիստորիային արժ. Եզնիկ քահ. Երզնկեանին և արժ. Աշոտ քահ. Թէմուրազեանին, նոյնպէս և Աւետեաց եկեղեցու երէցփոխ պ. Կաբալեանին։

—

Գիւղացիներին շերամի որդերի կանոնաւոր կերակրման ձևերի հետ ծանօթացնելու և այդպիսով շերամապահութիւնը բարձրացնելու համար, երկրագործութեան մինիստրութիւնը մտադիր է օրինակելի որդնարաններ շինելու, որոնք կփոխադրուեն գիւղից գիւղ և ուր շերամապահութեան հետ արդէն ծանօթ գիւղացիները կիրացնեն որդերի կերակրման կանոնաւոր ձևերը։

—

Մարգանեց արդիւնաբերողների համագումար ժողովը որոշել է երկրագործութեան և պետական կալուածների մինիստրութեանը խնդրամատոյց լինել Քութայիսում հանքային ուսումնարան բանալու այն նկատումով, որ մարգանեցի հանքը մշակող մասնագէտ-տեխնիկներ ամենևին չկան։

—

Յիշեցնում ենք, որ վաղը, կիրակի, ապրիլի 5-ին, հայ դերասանական ընկերութիւնը Թիֆլիսի վրաց ազն. բանկի թատրոնում ներկայացնում է Սունդուկեանցի «Էլի մէկ զոհ» կոմեդիան հանգուցեալ յուշարար Կ. Մաշինեանի ընտանիքի օգտին։ Թող հայ թատերասէր հասարակութիւնն արձագանք տայ այդ բարի գործին և նպաստէ նրա աջողութեանը յօգուտ մի մարդու ընտանիքի, որ երկար տարիներ անխոնջ ծառայել է հայ բեմին։

—

«Արարատ» ամսագրի անկանոն կերպով բաժանորդներին հասցնելը կատարեալ մի քրոնիքական հիւանդութիւն է դարձել, և բողոքները երբէք վերջ չունին. մինը գանգատւում է թէ համարներս լրիւ չեմ ստանում, միւսը թէ ուշ եմ ստանում, երրորդը թէ համարները ուրիշների ձեռքն են անցնում։ Մենք զարմանում ենք «Արարատ»-ի խմբագրութեան վրայ, որ կատարեալապէս վարժուել է այս բողոքներին և ուշ չի դարձնում ամենևին բաժանորդների պահանջներին, մինչդեռ «Արարատ»-ը հայ թերթերից ամենից բարեկարգ հանգամանքների մէջ է գտնւում։ Մինչդեռ ամեն հայ խմբագրութիւն հազարներով է կորցնում և անդարձ ապառիկ թողնում, «Արարատ»-ը շատ քիչ կամ ամենևին չի կորցնում, շնորհիւ վճարային կոնսիստորիաների և սրանց ու իւր գործակալների, առանց կոպէկ ծախք անելու։ Միթէ «Արարատ»-ի խմբագրութիւնը չգիտէ կամ չի ուզում գիտենալ, որ անցան գնացին հին ժամանակները և ներկայումս աշխարհիս ամեն ծայրերում կան պօստատներ և պօստային ծառայողներ, որոնք իւր ժամանակին նամակ և թերթեր են հասցնում բաժանորդներին առանց մըրգերների օգնութեան։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի կոնսիստորիան արժ. Յովհաննէս քահ. Տէր-Գրիգորեանի փոխարէն «Արարատ»-ի գործակալ է նշանակել արժ. Զաքարիա քահ. Զարդեգեանին։

—

ՇՈՒՇՈՒՑ.—Ապրիլի 28-ին մի արտակարգ ժողովում վճռուեց Նորին Մեծութիւնների թագադրութեան օրը հասարակութեան հաշուին ճաշ տալ զօրքին հասարակաց այգում և «Մելիքեան զուլումը» հանդէսներ, հրավառութիւն սարքել։ Այդ հանդէսների համար նշանակել են ութ հազար ռուբլի, որից 550 ր. հայերը պէտք է տան, 250 ր. թուրքերը։

– Նասր-Էզզին շահի սպանման գոյժը հասնելով Շուշի, պատուաւոր հայերը գնացին քաղաքումս ապրող պրինց Աքպար-Միրզայի մօտ ցաւակցութիւն յայտնելու։ Աքպար-Միրզան շնորհակալութիւն յայտնեց և ասաց, որ նոր շահին և թագաժառանգին կհաղորդի այդ ցաւակցութիւնը։ Հայերը հիւրասիրուեցան սուրճով։ Ապրիլի 30-ին պարսից և հայոց խանութները փակ էին։ Հայերը գնացին «Ջումա» մզկիթը։ Մզկիթի առաջ դիմաւորեցին թուրքերը և ներս հրաւիրեցին նրանց։ Այստեղ պ. Բախիշ-բէկ Ասրիբէկեանցը մի ճառ խօսեց, շահի սպանման առթիւ ցաւակցութիւն յայտնելով։ Այդ ճառից յետոյ ղազին—պարսից հոգևոր գլուխը շնորհակալութիւն յայտնեց։ Այնուհետև պարսից հոգևորականութիւնը հոգեհանգիստ կատարեց։

—Ապրիլի 25-ին, երեկոյեան ժամը 9-ին երկրաշարժ եղաւ։ Շարժի ուղղութիւնը արևմուտքից արևելք էր։

—Շուտով կքննուի բողոքական Օհան Տէր-Օհանեանցի գործը, որ մեղադրւում է բողոքականութեան տեղիս հիմնադրի գերեզմանի վրայ հայոց և օտար եկեղեցիների մասին խօսելու համար։

–Քաղաքիս առաջին մասի պրիստաւ Իւան Ճղնաւորեանը անբաւական լինելով դատաստանական վճռից, բողոք է տուել սենատին։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ. — Հանգուցեալ Կիւրեղ սրբազանի նախկին աշակերտները ապրիլի 28-ին կամեցան կատարել հոգեհանգիստ նրա շիրմի վրայ, ս. Խաչ վանքում սրբազանի հօր մահուան տարելիցի առթիւ։ Երկու օր առաջ յայտարարւում էր տեղիս «Պրիազ Կրայ» լրագրում կատարուելիք հոգեհանգստի մասին և թէպէտև յայտարարութեան մէջ ասուած էր, որ ս. Խաչ վանքում պատարագ պիտի կատարուի, իսկ պատարագից յետոյ հոգեհանգիստ, այնուամենայնիւ այնպէս չեղաւ. վանահայր Եփրեմ վարդապետը պատճառ բերելով թէ այդ օրը յատուկ պատարագ պիտի մատուցանի իւր ժողովրդի խնդրանօք, մերժեց երջանկայիշատակ սրբազանի նախկին աշակերտներին պատարագ մատուցանել, ուստի նրանք էլ հարկադրուած պատարագը մատուցանել տուին տեղիս ս. Նիկողայոս եկեղեցում, ուր ներկայ էին սրբազանի յիշատակը յարգող

տայ միմեանց ետեւից մի քանի վէպեր հրատարակեց։ Այդ բոլորի մէջ էլ Կիլանդը երևելի պատմող է հանդիսանում։ Նրան կարելի չէ բուն իմաստով հոգեբան անուանել, բայց դրա փոխարէն էլ նա գլխէ նկարագրիչ. նա նուրբ երգիծական տաղանդ ունի։ Կիլանդի լեզուն գեղուն է և ազատ, ձևը գեղարուեստական։ Նրա վէպերը բնապաշտների դպրոցին են պատկանում և ծաղրում են Նորվեգիայի մի փոքրիկ քաղաքի կեանքի եղանակն ու դրութիւնը։ Կիլանդը գրականութեան մէջ իւր կոչումը կատարեց – նա վէպն անհամեմատ կենդանի դարձրեց, շարժում մտցրեց նրա մէջ։ Կիլանդի բոլոր հերոսներն էլ գործում են, գործում, գործում։ Հեղինակն առանց դադարելու նրանց ստիպում է գործել։

Կիլանդը մեծ ներգործութիւն ունեցաւ երիտասարդ Նորվեգիայի վրայ։ Նրա հեղինակութիւնները շատ խրատական են, շատ հետաքրքիր, խիստ յուզում են ընթերցողներին։ Յաճախ նա շունչ ու կայծակ է թափում պահպանողական-ընդդիմադիր կուսակցութեան գլխին, և նրա հաստատամտութեամբ յառաջդիմումը մեծ օգուտ տուեց Նորվեգիայի երիտասարդութեան։ Նա հաստատապէս, խելօք, քաղաքավարութեամբ ծիծաղում է իւր նկարագրած հասարակութեան վրայ և իւր ճարտար գրչով մի առ մի մերկացնում նրա փտած կողմերը։ Կիլանդի գրուածքները հազարներով են տարածւում։

—

Սակայն Իօնաս Լիէի գրուածքներն աւելի շատ էին կարդացւում դուցէ այն պատճառով, որ սրանք աւելի չափաւոր ու ներողամիտ էին։ Իօնաս Լիէն նկարագրում է ընտանեկան կեանքը ծովի վրայ, գիւղում, լեռներում, գիւղական խրճիթներում, պաշտօնեաների տներում։ Լիէն պատմող է. նրա գրուածքներն աւելի հետաքրքիր են, քան խրատական։ Շատ անգամ նա պատմում է, թէ ինչպէս են մարդ ու կինը ապրում իրենց ընտանիքի մէջ, ինչպէս են վերաբերւում դէպի երեխաները, ինչպէս են տանում ընտանեկան այս կամ այն դժուարութիւնները, ձախորդութիւնները միջոցին։ Նա յեղափոխիչ չէ, թէև, ինչպէս և բնապաշտական շրջանի միւս նորվեգիացի գրողները, ձգտում է ուսումնասիրել, վերակազմել և բուժել Նորվեգիայի հասարակութիւնը։ Դանիայում և Նորվեգիայում շատ են սիրում Լիէին իւր հոգեկան քնքշութեան և տաղանդի համար։ Նա ինքնուրոյն միմիայն խելք և բարի սիրտ ունի։ Այդ հեղինակի գրուածքների մէջ տիպարներ չկան։ Նա լամպայի լոյսով, բազկաթոռի վրայ նստած, պատմում է իւր պատմութիւնները և դրանով զբաղեցնում է ընտանիքի բոլոր անդամներին։ Բեօրնսոնից յետոյ ամենից աւելի նրա ընթերցողների թիւն է շատ, հեղինակների մէջ ամենաժողովրդականը նա է։ Երբ Լիէն մեռնի, նորվեգացիները դեռ երկար ժամանակ պիտի յիշեն նրան իւր բարեսրտութեան համար, այլ և ազնիւ, պատուական մարդկանց մասին տուած այդքան ջերմ վկայականների համար։

—

Ահա այսպէս են այն չորս գրողները, որոնք Նորվեգիայի ներկայ գրականութեան հիմքը դրին ու նրա գլխաւոր յենարանն են կազմում։ Այդ գրականութիւնը բազմատեսակ չէ, նրա ճիւղերը շատ չեն, նա բարդ չէ, առանձին փայլ չունի, բայց և այնպէս նա իւր գործը կատարեց։ Երբ ամեն տեղ բնապաշտութեան մոդան էր տարածուած, նորվեգիացիներն էլ էին այդ հոգով գրում և, օտարերկրացիների վկայութեամբ, լաւ են աշխատել։

Պէտք է նկատի ունենալ, որ Նորվեգիան հազիւ երկու միլիոն բնակիչ ունեցող մի փոքրիկ երկիր է, իսկ փոքրաթիւ ազգերի մէջ չեն կարող մտաւոր բազմակողմանի լաւ ուղղութիւններ երևան գալ, առաւել ևս Նորվեգիայում, քան մի այլ երկրում։ Ընդարձակ երկրագնդի երեսին [illegible] ոչ մէկը չի գտնուել, որ կարող լինէր նորվեգիացուն յուզել, յափշտակել։ Նրանք ապրում են սառոյցների մէջ, մէջգիշերեայ արեգակնային ճառագայթների տակ, բոլորովին փակ կեանք են վարում, և միայն իրենց մանրիկ գործերով են զբաղուած. նրանք իրենց համար պատգամաւորներ են ընտրում, լաւ մշակները գիտական նպատակներով դէպի Գրենլանդիա են ուղևորւում, նրանք եկեղեցի են գնում, վաճառանոցներ ու [illegible] ցուցահանդէսներ յաճախում։ Իսկ 1879 թուից սկսած, այսինքն Շուեդիայի հետ միասին ընդհանուր թագաւոր ընտրելուց յետոյ, նորվեգիացիները բաւականանում են շուեդների հետ տեղական վէճեր յարուցանելով և սահմանակիցներին [illegible] վաճառելով։

Ահա այսպէս է Նորվեգիայի պատմական կեանքը, և այդ պատճառով էլ այդպէս թերի է նրա գրականութիւնը։ Այնտեղ ոչ պայքարում կայ, ոչ ժանտախտ, և ոչ նոյն իսկ փոքր ի շատէ նշանաւոր [illegible] դէպք (սկանդալ). ամենամեծ բանը, որ կարող է պատահել, անձնասպանութիւնն է կամ սնանկութիւնը. և այն ժամանակ ամբողջ Նորվեգիայի մամուլի մէջ փոթորիկ է բարձրանում։ Մինչև իսկ ընտանեկան կեանքի մէջ քիչ բազմատեսակութիւն կայ, ողբերգականութիւն չկայ, հարուստ մարդկանց թիւը քիչ, չափաւորութիւն համարեա թէ չկայ, ամենքն էլ հասարակ դասակարգի մարդիկ են։ Տղամարդը հաց է ճարում, կինը [illegible] և [illegible] հետ չի փախչում, որովհետև սիրեկան չունի։ Կինը բաւականանում է ընտանեկան օջախով, ամուսնով, զաւակներով և բարեգործութեամբ։ Սակայն, չնայելով այսպիսի միապաղաղ լինելուն, նորվեգիացիները կարողացել են իրենց համար հետաքրքիր գրականութիւն ստեղծել, որը զարդարուած է միքանի նշանաւոր հեղինակաւոր անուններով, ուստի և նրանց մատուցած ծառայութիւնն առաւել ևս մեծ է։ Նորվեգիայի հեղինակների ամենալաւ երկերը բանաստեղծութեան դիւթական լոյսով են լուսաւորուած։

Բայց այժմ արդէն այդ բոլոր գրողները ծերացել են, բացի Բեօրնսոնից, որը մինչև օրս էլ անսովոր կրակով բոցավառւում է։ Նորվեգիական երիտասարդ գրականութեան մէջ յուզում, շրջանկատ երիտասարդ հեղինակների մի նոր բազմութիւն է երևան գալիս։ Նրանց մեծ մասը միայն կիսով չափ բնապաշտ է, միւսները—զուտ գեղեցկագէտներ։ Նրանց մէջ կան քնարերգուներ, ուրախ-տաղանդաւոր վիպասաններ, բայց մինչև այժմ նրանք դեռ շատ երիտասարդ են, և նրանց մէջ ներդաշնակութիւն չկայ։ Համարեա այդ բոլորը հակա-բնապաշտական հակումներ ունին։ Իդէալական ուղղութեան շարժումն է սկսւում—«Արևը փայլում է, վարդերը բուրում են, կրօնք զարթնում»։

Հեղինակներն այլ ևս հասարակական կազմի բարեփոխութեամբ չեն զբաղւում. այլ այդ գործը թողել են պատգամաւորների ժողովին, մամուլին, բարեսիրտ մարդկանց, իսկ իրենք բանաստեղծական երկեր են գրում մերթ ոտանաւոր և մերթ արձակ։ Եւ պէտք է աւելացնել, որ երիտասարդ գրողների այդ փորձերը շատ անգամ արտայայտում են նրանց խոշոր տաղանդը, ճշմարիտ արուեստը։ Բայց նրանք ընդհանուր շարժում առաջ չբերին. նրանք դեռ իրենց թևերն են փորձում։ 1870 թուականի հեղինակները մինչև օրս էլ տիրում են Նորվեգիայի գրականութեան վրայ՝ իրենց վեհութեան, փառքի և ոյժի շնորհիւ։

Միհրան։

անձեր, մեծ մասամբ ուսուցիչներ և ուսուցչուհիներ։ Պատարագից յետոյ ամենքը հաւաքուեցան ս. Խաչ վանքը, ուրտեղ հաւաքուել էին քառասունի չափ անձեր՝ սրբազան հօր մօտ բարեկամներից միքանի անձեր, նրա աշխատակից ուսուցիչներ և նրա նախկին աշակերտները։ Ժողովրդից աչքի էին ընկնում միքանի պատուաւոր յայտնի վաճառականներ։ Հոգեորականութիւնից կար չորս քահանայ։ Իր առանձնացած մատուռից վերջացնելս դուրս եկաւ վանահայրը և սկսուեցաւ հոգեհանգիստը։ Վանքի գիշերօթիկ աշակերտները կարգով կանգնած էին գերեզմանի աջ կողմը։ Հոգեհանգիստը վերջանալուց յետոյ վանքի աշակերտներին բաժանեցին նարինջ։ Սրանից յետոյ ամենքը գնացին պարտէզ, որտեղ նախաճաշիկ կար պատրաստուած և թէյով մեծարուեցան։

ԳԱՆՁԱԿԻՑ. — Կիրակի երեկոյեան, ապրիլի 28-ին, ոստիկանատան շինութեան մէջ հրդեհ ծագեցաւ։ Այրուեց հաշուապահական մասը։ Թէ հրդեհը ինչից է ծագել, ոչ ոք չգիտէ։ Այս հանելուկը երևի կլուծեն քաղաքային խորհրդի նորընտիր իրաւատուները։ Ասենք դրանով գործը բաւականին թեթևանում է։

Խմբագրութիւնս ստացաւ հետևեալ նորագոյն հրատարակութիւնները։

1) «Սրբոյ հօրն մերոյ երանելոյն Գրիգորի Լուսաւորչի յաճախապատում ճառք լուսաւորք» յառաջաբանով, համեմատութեամբ և ծանօթութիւններով Ա. Տէր-Միքելեանի (Վաղարշապատ, 354 էջ, մեծածալ, գինը 1 ռ.)։

2) Մխարան (Գ. Տ. Մկրտչեան), «Խորենացու պատմութեան ուսումնասիրութիւն» (Վաղարշապատ, 81 էջ, մեծածալ, գինը 35 կ.)։

3) «Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ». գրեց Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանց Նախիջևանցի, միաբան ս. էջմիածնի (Վաղարշապատ, 843 էջ մեծածալ գինը 2 ռ.)։

4) Լերմոնտով, «Մծիրի»։ Թարգմ. Յովհաննէս Թումանեանց, հրատ. Փիլիպպոս Վարդազարեանի (Թիֆլիս, 35 էջ գինը 15 կ.)։

ԵՐԵՒԱՆԻ ՎԻՃԱԿԻ ԼԵՌՆԱՅԻՆ ԳԱՒԱՌՆԵՐԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ.

Բաւական է որևէ գիւղական եկեղեցի արտաքուստ և ներքուստ մանրամասնօրէն ուսումնասիրելուց յետոյ նկարագրել, և ահա մենք կունենանք աչքներիս առաջին՝ քիչ բացառութեամբ՝ բոլոր եկեղեցիների պատկերը։

Մեծ թէ փոքր, հարուստ թէ աղքատ գիւղերի եկեղեցիներն ընդհանրապէս հասարակ քար ու ցեխից շարուած բըլբըլածքներ են։

Սակաւ մասը հաշուի չառած, այդ կիսաքանդ խարխուլ աւերակները կէս դարից ոչ պակաս հիմնարկուած են։

Կէս դար եմ ասում, որովհետև, ինչպէս քաջ յայտնի է, ռուս-պարսկական և ռուս-թիւրքական պատերազմներն էին որ քսանական թուականներին Արարատեան աշխարհը լցրին թիւրքահայերի և պարսկահայերի գաղթականներով։

Հաւանական է, որ նախնի գաւառի հայ ժողովրդեան տարագրութեան հետ միասին՝ բռնակալների ձեռքով հիմնայատակ կործանուել են գիւղական հողաշէն եկեղեցիները։

Ասածներիս իբրև ապացոյց՝ ճակատները դէմ դրուած կանգնած են մինչև այսօր աւերակուած քարուկրից կառուցուած վանքերն ու տաճարները։

Անօրէնների ձեռքերը, պարզ երևում է, որ յոգնել են բիր ու մուրճ գործածելուց և հազիւ կարողացել են տեղ տեղ պատերի քարերից հատ ու կտոր քարեր դուրս կորզել. մի ուրիշ տեղ՝ առաստաղն են փլցրել, կամ մի անկիւնաքար կոտրատել և կամ խաչքարների քանդակները փշրտել։

Չկարողանալով դարերի հետ կռուող հաստահիմն տաճարները բնաջինջ անել, խաչի թշնամի բռնակալները, և դուցէ, խաչապաշտ հայի դարևոր ոսոխ յոյնը իրենց դառն մաղձը թափել են գիւղական հողաշէն եկեղեցիների վրայ և անհետ աւերել։

Վկայ են խօսքիս շատ գիւղերում դեռ ապրող, կեանքի վերջին մնացորդ օրերն անդադար համարող ծերունիները։ Նրանցից շատերը յիշում են մանկական և պատանեկական տարիներում իրենց եկեղեցու շինութեան վրայ աշխատելը։

Բռնաւորների երկիւղից տրդեօք, թէ այլ հիմնաւոր առիթից դրդուած՝ վերաշինեալ գաղթականներն իրենց եկեղեցիները շինել են գիւղի կեդրոնում, իսկ իրենք շուրջ բոլորել։

Միմեանց կից, գիւղական գետնափոր տներից եկեղեցին զանազանւում է միայն իւր կրկնակի բարձրութեամբը։

Աստուծոյ տան ամենամօտ դրացին և պահապանը քահանան է, որը հոգևոր կարգն իւր պապերից յաջորդաբար ժառանգելով, իւր բնակարանի պատը հիւսիսից, հարաւից, արևելքից, կամ արևմուտքից միացրել է եկեղեցու պատին։

Առհասարակ հարաւային կողմից՝ եկեղեցու դռնից դէպի արևմուտք, թողուած է մի փոքրիկ հրապարակ, իսկ դէպի արևելք՝ քահանայի կամ երէցփոխի գոմն է, որի դուռը բացւում է եկեղեցու դրան դիմացը։

Սովորաբար, գոմերն երկու մասի են բաժանւում, մի մասում անասուններն ու գրաստներն են կապւում, միւս կիսում օդան, կամ սաքուն է իւր մշտածուխ ծխնելուզով։

Ձմեռն ժամանակն այդ օդաներն են գիւղական համայնքի գլխաւորների ժողովատեղին, իսկ գարնանը և աշնանը՝ տաք եղանակներին՝ արեգակի ջերմութեան դուրեկան ժամանակը՝ եկեղեցու առաջի հրապարակումն են խմբւում գիւղի առաջաւորները։

Ծերունիներն ու պատուելիները թիկունքները յենում են եկեղեցու պատին և օրն ի բուն պպզած մնում։

Այստեղ են տեսնում գիւղացիներն իրենց համայնական հաշիւները, այստեղ է կազմակերպւում հարկաժողովի եղանակը, այստեղ են ընտրւում գեղջական տանուտէրը, երէցփոխը, գզիրը, ժամկոչն ու նախրորդը. այս արևկող բացօթէի մէջ են վճռւում բոլոր դատերը։

Եւ որովհետև ծխական դպրոց չեղած գիւղերում, քահանայի սենեակներից մէկն էր ամառային ուսումնարանը, իսկ ձմեռը՝ սենեակին փոխարինում էր գոմի օդան, ուսուցիչն էլ ինքը տէր հայրն էր, հետևաբար եկեղեցու առջևի հրապարակն էր լինում աշակերտաց խաղատեղը, ուստի և գիւղական մանուկները իրենց հայրերից առած դասերը—հայհոյանքներն ու բամբասանքները, որոնք եթէ քաղաքակիրթ մարդու ականջների թմբուկները կըզրկեն, յամենայն դէպս գեղջուկի խօսքի աղն ու քաղցրութիւնն են կազմում։

Աչքառու է, որ այստեղ էին կատարւում առաւել հայհոյանքների հետևանքները. ծեծ ու ջարդ, քիթ ու մռութ արիւնոտել՝ սովորական են այս հրապարակում։

Այս ամեն տեսարաններին անբաժան վկայ է ինքը գիւղական քահանան, որը երբեմն, ի պատիւ կարգին՝ ասենք, միջնորդ հաշտարար դեր է կատարում և յաջողեցնում։

Անշիրաբ կատարեալ կըհամարուի, եթէ աւելացնենք, որ գոմի դրան առջև աղբի տաքութիւնը վայելում են տէրերից անբաժան, գարուն ընկած գոմէշներն ու կովերը, որոնց երբեմն շնորհ է անում իւր ներկայութեամբ պատուել բազմաշարչար երկարականջը։ Նա և յետ չէ մնում իւր մասնակցութիւնը ցոյց տալուց յարգելի ժողովականների խորհրդին. ազմուկի ժամանակ իւր բարձր մեղեդիով ներդաշնակութիւն է տալիս ճիւաղային համերգին, մանաւանդ կրկնում է նա իւր երգը, եթէ հրապարակի մի կողմում խաղացող կիսամերկ և բոկոտն մանուկները «ծուղրու» կանչելով՝ ձայնակցում են մանրատառիկ երգչին։

Լրացրած կլինենք Աստծու տան արտաքին նկարագիրը, եթէ յիշենք եկեղեցու մօտում գտնուած գիւղի հարուստներից մէկի կալատեղը, ուր ձմեռները ձգւում է եկեղեցու պատկառելի դրացու խոտանոցը կամ քոմը։

Այս ոչ այլ ինչ է, եթէ ոչ անասունների աղբը, որ ձմեռ ժամանակը թափւում են կալումը, ոտքով տրորելով հաւասարեցնում և գարունը կտրատում են բազմանկիւն աղիւսի նման, արևգակի տակ չորացնում և առաջիկայ ձմեռը վառելիքի տեղ գործ ածում։

Որքան և աղբից բարձրացած գարշահոտութիւնը ժամասողների և ժամաւորների քիթն և ուղեղներն է դրգռում, բայց և այնպէս այդ այնքան զգալի վնաս չի պատճառում, որքան ամառը՝ կալը քամի տալուց յառաջացած մղմեղը, կամ դարմանի փոշին։ Կուզես փակիր եկեղեցու լուսամուտներն ու դուռը, հերիք է, եթէ մի մազի հաստութեամբ, ծակ կամ ճեղքուած լինի պատի մէջ, այդ նեղ խողովակից էլ մղմեղը լցւում է եկեղեցու ներսը և նստում սուրբ անօթների վրայ։ Վտանգաւոր է մանաւանդ՝ պատարագի ժամանակ։ Եւ ինչ ասել կուզէ, որ քիչ եկեղեցու պատ կըտեսնես չճեղքուած։

Մղմեղ ասացի և յիշեցի, քիչ մնաց մտքիցս թռչում էին կռնակից գոյացած և շնչաւորուած մժեղները, կամ մլակները—այն հազիւ նշմարելի թևաւոր միջատները, որոնք բիւր-բիւրաւոր և հազարք-հազարաց խմբովին թռչկոտելով և խաղացնելով օդի մէջ, լցնում են ժամ մտնողների քիթը, աչքերն ու կոկորդը։

Եկեղեցու արտաքինը հետազօտելուց յետոյ, այժմ մտնենք ներս։

(Վերջը միւս անգամ)

Պերճ Պռօշեան։

ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

⁂ «Դիւտըր. Գազետ.»-ն հանգուցեալ Նասր-Էդդին շահի մասին պատմում է հետևեալ զուարճալիքը, որ, հաւանականաբար, առնուած պէտք է լինի ֆրանսիական աղբիւրներից։

Պարիզ արած առաջին այցելութեան ժամանակ,—պատմում է վերոյիշեալ լրագիրը,—երբ հասարակապետութեան գլուխը գտնւում էր մարաջախտ Մակ-Մահոնը, Նասր-Էդդին շահը իրեն առաջնորդող Պարսկաստանի ֆրանսիական դեսպան՝ պ. Բուրէին յայտնում է, թէ ցանկութիւն ունի այցելել նախկին նախագահ Թիէրին, որի մասին լսել է, թէ շատ խելացի մարդ է։

Դեսպանը տեսնելով, որ Թիէրի և Մակ-Մահոնի յարաբերութիւնները սաստիկ լարուած լինելու պատճառաւ, բոլորովին անտեղի է այդ այցելութիւնը, շահին այդ մտադրութիւնից յետ կեցնելու համար դիմում է հետևեալ խորամանկութեանը։

— Ձերդ մեծութիւնը,—ասում է դեսպանը, չարժէ Թիէրին ձեր այցելութեան արժանացնել, բատ որում նա ֆրանսիացի բաբիների պարագլուխն է։

— Եթէ այդպէս է, ես տեսնել անգամ չեմ ուզում նրան։ Բայց ինչո՞ւ ուրեմն նրան չեն խաչել մինչև այժմ։

Վերջին խօսքերով շահը կամենում էր ակնարկել այն դատաստանը, որին ենթարկել էր ինքը բաբի աղանդի հիմնադրին և նրա հետևողներից շատ-շատերին։

⁂ Իշխան Մեշչերսկին հետևեալ հետաքրքիր տեղեկութիւնն է հաղորդում Թագադրութեանը ներկայ գտնուելու համար Չինաստանի կողմից եկող արտակարգ դեսպան Լի-Հունգ-Չանգի՝ իւր հետ շրջաբերած կայքի մասին։ Նա ասում է, որ չինական գեներալը իւր հետ ունի մետաղեայ մի հոյակապ դագաղ, որ նա իւր հետ տան է ածում ամեն տեղ, և որի մէջ հոգու ամենայն անդորրութեամբ պատրաստ է ամեն մի վայրկեան պառկելու։ Այդ դագաղը նրա հետ է եղել նաև չին-ճապոնական պատերազմի ժամանակ... Նա պատմում է, որ այդ պատերազմին, երբ ճապոնացիների գնդակը դիպել էր իւր դէմքին, ինքը վայր է ընկել և անշնչացած վիճակի մէջ մնացել է բաւական երկար ժամանակ. իսկոյն բերել են նրա մօտ իւր դագաղը և պատրաստուելիս են եղել նրա մէջ դնելու, երբ յանկարծ նա ուշաբերուել է, ցանկութիւն է յայտնել ծխելու, ծխելուց յետոյ ուտելիք խնդրել կամաց-կամաց սկսել էին ուժերը վերականգնել։ Վէրքը փոքր առ փոքր փակուել է, իսկ գնդակը մնացել է քունքի մէջ առանց որևիցէ անհանգստութիւն պատճառելու նրան։

Իշ. Մեշչերսկին պատմում է դարձեալ, որ Լի-Հունգ-Չանգի ծառաների թւում գտնւում է մի շատ հետաքրքիր անձն. այդ մարդը այժմ ստանում է 8 ռուբ. թոշակ, իսկ նախ քան այդ ծառայական վիճակին հասնելը Չինաստանում երկու անգամ բարձր պաշտօնեայ է եղել և երկու անգամ պաշտօնանկ եղել Արթուր ամրոցի հրամանատարութեան վերաբերութեամբ անյաջող գործունէութիւն ունենալու պատճառով։

Չինաստանի համար է, կարծես, ասել Նապոլէոնը —«Վեհագոյնից մինչև ծիծաղելին մի քայլ է»։ Անմիջական բարձրացումը և յանկարծական անկումը սովորական բաներ են Չինաստանի մէջ։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

(«Նոր-Դար»-ի թղթակցից)

Կ. ՊՈԼԻՍ, 27 ապրիլի.—Անցեալ պոստով, ի միջի այլոց, գրեցի ձեզ Գաւաքում մի թիւրքական շոգենաւի հետ պատահած դէպքի մասին, որի պատճառը զանազան կերպ էին բացատրում, սակայն ճշմարտութիւնը հետևեալն է։

Սուլթանական իրադէով յանկարծ հրաման եղաւ միքանի հարիւր զինուորներ շոգենաւ նստեցնել և Տրապիզոնի, թէ Սամսոնի ճանապարհով ղրկել Անատոլու։ Զինուորներին ոչինչ յայտնի չէր, ուստի միւս առաւօտը, երբ հրաման եղաւ իրենց բոլոր պարագաներով շոգենաւ նստել, նրանք շատ զարմացան, բայց կարծելով թէ մօտիկ տեղ պիտի գնան, ամենևին ձայն չհանեցին։ Սակայն շոգենաւը ճանապարհ ընկած պահուն միայն իմացան, որ իրենց վիճակուած է հեռու ճանապարհորդութիւն կատարել. նրանք արդէն բաւական ամիսներ է, որ ռոճիկ երես չեն տեսել, ուստի դիմելով կապիտանին, հարցրին արդեօք իրենց ռոճիկները պիտի տըրուին... Պատասխանը բացասական եղաւ, ուստի զինուորների մէջ սկսուեցաւ մի խուլ խլրտումն։ Շոգենաւը հազիւ թէ Գաւաքի առջևն էր հասել, երբ յուսահատ զինուորները յայտարարեցին նաւապետին, որ շոգենաւը կանգնեցնի, որովհետև իրենք առանց ռոճիկը ստանալու մտադիր չեն նեղուցից դուրս գալու։ Նաւապետը նշանակութիւն չտուեց նրանց յայտարարութեան, ուստի զինուորները խօսք մէկ անելով անմիջապէս կապոտեցին նաւապետին և սպառնալիքով հրամայեցին, որ նաւաստիները խարիսխ ձգեն։ Նրանց ցանկութիւնն այս անգամ կատարուեցաւ և ապա հեռագրուեցաւ զինուորական մինիստրին ու սուլթանին, թէ զօրքերը չպիտի գնան, մինչև որ ռոճիկ չստանան։ Իրարանցումն ընկաւ թէ մինիստրութեան և թէ պալատի մէջ, սակայն ազմուկ յառաջացնելով աշխարհի առաջ չխայտառակուելու և միւս զինուորներին էլ ոտքի չհանելու մտքով, լռելեայն վճռուեցաւ նրանց ռոճիկները վճարել։ Գաւաքի զօրքերը իրենց ռոճիկը լրիվ ստանալուց յետոյ «փադիշահըմ չօք եաշա» պոռացին ու նաւապետի կապանքներն արձակելով ճանապարհ ընկան դէպի Անատոլու։

Այս դէպքից երկու թէ երեք օր յետոյ Թուրք ժողովրդի մէջ լուր տարածուեցաւ, իբր թէ կառավարութիւնը չորս մաւոնա ծանրութեամբ զուտ ոսկի է գտել։ Չորս մաւոնան միջին թուով հարիւր տոնն կամ 6,200 փութ կանէ։ Սա ահագին հարստութիւն է և այս առասպելական զրոյցը շրջում է բոլոր մահմեդականների բերանում, աւելացնելով նաև, թէ այսուհետև Թիւրքիան պիտի կարողանայ դէմ դնել բոլոր պետութիւններին և նրանց առաջ վիզ ճկելու այլևս հարկ չի լինի։ Արդեօք ֆինանսական ծանր ճգնաժամի մէջ սա մի քաղցր երազ է, որ երազել է ինքը՝ մահմեդական ժողովուրդը, թէ ներքին խլրտումը առժամաբար խաղաղեցնելու նպատակով կառավարութիւնն է մի այսպիսի սուտ զրոյց հրատարակել —այդ ճիշտ գուշակել կարելի չէ, սակայն թէ մէկը և թէ միւսը հաւանական են. քաղցածը հաց և ծարաւը ջուր կերազի, թէև ճշմարտութիւնն այն է որ ֆինանսական տեսակէտից Թիւրքիան Յունաստանից էլ յետ է մնացել։

Եւ այդ ֆինանսական ճգնաժամը, գողութիւններն, աւազակութիւններն և բացարձակ սպանութիւնները օրաւուր կրկնապատկելուց յետոյ, ինքնասպանութիւններն էլ հետզհետէ սաստկանում են։ Այս մի շաբթուայ ընթացքում ինքնասպանութեան չորս դէպք պատահեցաւ. մի կին չուանով ինքն իրեն էր կախել, մի երիտասարդ շոգենաւից իրեն ծովը նետել, երրորդը գանգը պայթեցրել, չորրորդը... եայլն եայլն։ Եւ սրանք բոլորն էլ տոմսակներ են թողել այս բովանդակութեամբ, թէ կեանքը Պոլսում այլևս անտանելի է, ապրել անկարելի է, ուստի վերջ են տալիս իրենց տաժանելի կեանքին։

Պարսից շահի մահուան լուրն այստեղ մեծ տխրութեամբ լսուեցաւ. այդ մասին էլ առասպելական զրոյցներ են շրջում և մեծ նշանակութիւն տալիս այդ դէպքին։ Ճիշտ է, որ նա գոհ գնաց դիւանագիտական ինչ-որ մութ հաշիւների, սակայն աւելի ճիշտ է, որ նա ամեն տեղ, ամեն ազգի և կրօնի պատկանող ժողովրդի մէջ ևս մեծ յարգ ունէր, ուստի նրա մահուան լուրն ամենքին ևս տխրութիւն պատճառեց։ Ս. Պատրիարքը շտապեց մարդ ուղարկել դեսպանին ցաւակցութիւն յայտնելու համար, և շնորհաւորելու միևնոյն ժամանակ գահաժառանգ Միւզաֆֆար-էդդինի գահակալութիւնը։ Ցաւակցական այցելութիւններ տուին Պոլսոյ բոլոր դեսպանները, գործակատարներ և Թուրք մինիստրութիւնը։ Նոր շահի հրամանով Միրզա Մահմուդ խանը վերահաստատուեցաւ Պոլսոյ պարսկական դեսպանի պաշտօնում։

Ռուսական դեսպան Պ. Նելիդովը իւր հետևորդներով ճանապարհ ընկաւ Պետերբուրգ, ներկայ գտնուելու թագադրութեան հանդիսին։ Նոյն նպատակով ճանապարհ է ընկել Թիւրք պատգամաւորութիւնը։

Անցեալ օր Տիգրան Գարագեօզեանի սպանութեան դատը տեսնուեցաւ. մեղադրուողներից մէկը դատապարտուեցաւ մահուան պատժի՝ որպէս ոճրագործ, միքանի հոգի տասնական տարուայ բանտարկութեան՝ որպէս մեղսակից, մէկին ի բացակայութեան դատեցին բոլոր իրաւունքներից զրկման ու կայքի [illegible], իսկ միքանիսին էլ անպարտ արձակեցին։

Զարմանալի դատավարութիւն. ամբողջ Պոլիսը գիտէ, որ Գարագեօզեանին սպանողը Աթէնքի վրայով գնաց Եւրոպա, այնինչ այստեղ որպէս բուն ոճրագործ մահուան դատապարտեցին բոլորովին անմեղ մարդու, միմիայն նրա համար, որ անտանելի տանջանքների տակ խոստովանել էր իւր չգործած յանցանքը, միմիայն տանջանքից ազատելու համար։

Mars.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

Մուշում ձերբակալուած են 200 հայեր այն պատրուակով, թէ նրանք մասնակից են եղել 1894 թ. մի քիւրդի սպանման։ Կ. Պոլսի օտարերկրեայ դեսպանները երկիւղ են կրում, թէ մի գուցէ Սասունի գաւառում նոր խառնակութիւններ լինեն։

—

Դիարբէքիրից հաղորդում են, որ նահանգապետն ամեն կերպ աշխատում է հայերի ունեցած հողերը խլել։ Գիւղերի բոլորովին աղքատացած բնակիչներից նա պահանջում է հարկերը, և երբ նրանք չեն կարողանում—և որտեղից կարողանան—տալ, պարտաւոր են իրենց հողերը տալ թուրքերին։ Նոյն նահանգապետը պնդել է այն բանի վրայ, որ նպաստների բաշխումը կատարուի թուրք պաշտօնեաների ձեռքով։

—

Կ. Պոլսից, ապրիլի 27-ից «Ռուս. գործ.»-ը հեռագրում է, որ անգլիական դեսպանութիւնը պիտի բողոքէ հայերին խմբովին բռնի մահմեդականութիւն ընդունել տալու դէմ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.—Շահին սպանող Միրզա-Մահմուդ-Ռիզան յայտնւում է իբրև թէ ունք կուսակից պարսից յայտնի դաւադիր Ջիմալ-Էդդինի, որը 1891 թ. յեղափոխական պրոպագանդա անելու պատճառով աքսորուեցաւ Պարսկաստանից։ Հաւատացնում են, որ շահի սպանումից մի փոքր առաջ Ռիզան տեսակցութիւն է ունեցել Ջեմալ-Էդդինի հետ Կ. Պոլսում։ Թուրքաց ոստիկանութիւնը տենդային գործունէութիւն է ցոյց տալիս, Կ. Պոլսում բաբիականներին յետապնդում են և չորրորդ զօրաբաժնի հրամանատարին հրաման է ուղարկուած պարսկական սահմանում խիստ հսկողութիւն հաստատելու։ Ինչ վերաբերում է Ջեմալ-Էդդինին, նա ներկայումս Պարիզումն է գտնւում, որտեղ «Intrasigent»-ում տպեց շահի միտումնաւոր (տենդենցիոզ) կենսագրութիւնը, միևնոյն ժամանակ յեղափոխական ձգտումներ անցկացնելով։ Որովհետև Պարիզի պարսից դեսպանութիւնը պահանջում է Ջեմալ-Էդդինի յանձնումը, այդ պատճառով Ռոշֆորը եռանդուն կերպով պաշտպանում է նրան, հաստատելով, որ Ջեմալը ոչ մի յարաբերութիւն չի ունեցել Ռիզայի հետ։ Ջեմալ-Էդդինն իսկապէս պարսիկ էլ չէ, այլ աւղանցի է։ Հինգ տարի առաջ նա բնակութիւն հաստատեց Անգլիայում։

— Կ. Պոլսից հեռագրում են «Times»-ին. «Այժմ արդէն յայտնի է, որ յանցագործութիւնը կատարելուց փոքր առաջ շահին սպանողը մի քանի օր շարունակ հիւր էր Կ. Պոլսում պարսկահպատակ չէյխ Ջեմալ-Էդդինի մօտ։ Կ. Պոլսի պարսից դեսպանը Դռնից պահանջեց չէյխի, նոյնպէս և երեք այլ կասկածաւոր անձերի աքսորումը։ Դեսպանի խնդիրը կատարուեցաւ և սուլթանը մի իրադէ հրատարակեց, որով վճռւում էր յիշեալ անձերի աքսորումը, բայց յետոյ, մի քանի պալատականների միջնորդութեամբ, իրադէն փոխուեց. սակայն նրանք, որոնց վերաբերում էր իրադէն, Թիւրքիայից անյայտացան»։

Թեհրանից ապրիլի 27-ից (մայիսի 9-ից) հեռագրում են «Ռէյտերի» գործակալութեանը.

«Բրիտանական դեսպանը շահի դագաղի վրայ երէկ մի պսակ դրեց թագուհու կողմից, որի վրայ ֆրանսերէն գրուած է. «Անկեղծ բարեկամութեան յիշատակին։ Վիկտորիա»։

ԹՈՒՐՔԻԱ.—Կ. Պոլսից գրում են Վիեննայի «Pol. Corresp.»-ին. «Իշխան Ֆերդինանդի Կ. Պոլսում եղած միջոցին շօշափուած էր մի խնդիր, որ հետաքրքրում է ոչ թէ միայն Բուլղարիային, այլ և Բալկանեան թերակղզու միւս պետութիւններին։ Դա պետական պարտքի խնդիրն է։ Յայտնի է, որ Բեռլինի դաշնագրի մի յօդուածն ասում է, թէ Բուլղարիան պէտք է իւր վրայ առնէ Թիւրքիայի պետական պարտքի մի մասը, որի քանակութիւնն իշխանութիւնը ինքը կարող է որոշել։ Միևնոյն բանը վճռուած էր և Չեռնոգորիայի (33 յօդ.) և Սերբիայի (42) վերաբերմամբ։ Այդ խնդրի կանոնաւորման վերաբերմամբ Թիւրքիայի կողմից բազմիցս հարցմունք էր եղել բուլղարական մինիստր-նախագահին։ Ստոյլովը պատասխանել էր, որ դա միջազգային խնդիր է, և Բուլղարիան միայն այն ժամանակ բանակցութիւնների մէջ կմտնէ այդ առթիւ, երբ այդ խնդիրը վճռելուն կմասնակցեն և միւս պետութիւնները։ Կ. Պոլսի քաղաքական շրջաններում կարծում են, որ Ռուսիան հրաւիրել է Թիւրքիայի ուշադրութիւնն այդ խնդիրը վճռել սկսելու վրայ»։

—

ԻՏԱԼԻԱ.—«Memor. Diplom.» թերթը պնդում է, թէ Հռոմի քաղաքական շրջաններում կարծիք է յայտնւում, որ գեներալ Բուլդիսերին մօտ օրերս պէտք է վերադառնայ Իտալիա, մինիստրութեան հետ աֆրիկական պատերազմի մասին խորհրդակցելու համար։ Լուրեր են տարածուած, թէ դի-Ռուդինիի կաբինետում լուրջ անհամաձայնութիւններ են ծագել։

Հաբէշական իշխան Հուգոր, որը Մենելիքի եղբօր որդին է, տարուել է Տուրին և դրուել զինուորական ուսումնարան։ Իշխանին տրուած է աշակերտներից զատ մի բնակարան և խիստ հսկողութիւն է նշանակուած նրա վրայ։

—Իտալական «Esercito» լրագիրը հաղորդում է, որ գեներալ Բարատիերիի՝ պատերազմի դաշտից փախչելու և դաւաճանած լինելու վերաբերմամբ յարուցուած ամբաստանութիւնն ընդհատուել է։ Նա դատի պիտի ենթարկուի ուրիշ յանցանքների համար, որոնցից ինչ լինելու վերաբերմամբ դեռևս ոչինչ յայտնի չէ։

— Կաւալոտտին պատգամաւորների պալատում կառավարութեան հարցապնդում է արել Կրիսպիի մինիստրութեան ժամանակ ոստիկանական գանձարանից դրամ անյայտանալու մասին։ Ռուդինին պատասխանել է, թէ այդ պարագայում խնդիրը վերաբերում է ոչ թէ որևիցէ զեղծման, այլ ուղղակի կառավարական միջոցներին, հենց այդ պատճառով այդ գործերի հետևանքները չի կարելի հրատարակել։ Նախկին մինիստր Բեչալլին և ներքին գործերի մինիստրի օգնական Հալլին պահանջել են, որ այդ գործը մասամբ գոնէ պարզաբանուի։ Այդ ճանապարհով հնարաւոր կլինի մի անգամ առ միշտ երևան հանել այն ստութիւնը, որին դիմում են անցեալ վարչութեան հակառակորդները։ Պալատը որոշեց՝ Կաւալոտտիի հարցապնդումը քննութեան ենթարկել աֆրիկեան գործերի վիճաբանութիւնները վերջանալուց յետոյ։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՀԵՌԱԳՐՆԵՐ «ՆՈՐ-ԴԱՐ»-ԻՆ

—

ԼՈՆԴՈՆ, 3, մայիսի.—«Times»-ին հաղորդում են Կահիրէից, որ Ալեքսանդրիայի եւրոպական բնակիչները խոլերայի սաստկանալուց վախեցած, մեծ բազմութեամբ հեռանում են քաղաքից։

«Daily News»-ը հաղորդում է, որ Կահիրէյում վախճանուեցաւ պետական պարտքի գանձարանի գործակալ բարոն Ռիխտհոֆէնի ամուսինը։

ՀՌՈՄ։—Մասսովայից հեռագրում են, որ Բալդիսերը պահանջելով մայոր Զալցայի և ուրիշ գերիների յանձնելը, Ռաս Մանգաշային գրեց «եթէ դու կըհրաժարուես գերիները յանձնելուց, այն ժամանակ ես ինքս կըգամ նրանց համար»։

ԲԻԶԵՐՏԱ, (Տունիս).—«Redoutable» և «Brennus» զրահաւորները առաւօտեան անցան ջրանցքը և խարիսխ ձգեցին Մեծ Բիզերտեան լիճը.

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ.—Մայիսի 1-ին, գիշերը «Վիկտորիա և Ալբէրտ» զբօսանաւով ժամանեց Կանատեան հերցոգն ամուսնու հետ։ Բարձր ուղևորները մի օր կըմնան դանիական արքայական զոյգի մօտ Ամալիէնբորգում և ապա կըգան Ռուսաստան։

Դանիական թագաժառանգ պրինցը մայիսի 2-ին, երեկոյեան Բեռլինի և Վարշաւայի վրայով, մեկնեց Մոսկուա,

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Թագաժառանգ պրինց Ֆերդինանդը մեկնեց Վիեննա ամուսնուն դիմաւորելու, յետոյ երկուսն էլ Մոսկուա կըգնան.

ՄՈՍԿՈՒԱ.—Ապրիլի 30-ին ժամանեցին Մեծ-Բրիտանիայի, սպանիական, ամերիկական և բելգիական դեսպանները, լուսաւորութեան մինիստր, սինոդի աւագ դատախազի օգնականը, գեներալ Գանիցկին, օտարերկրեայ դիպլոմատիքական մարմնի մի քանի անդամներ։ $6^{1}/_{2}$ ժամին ժամանեցին Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաևիչը և արևելեան պատրիարքների ներկայացուցիչները։ Կուրսկի կայարանում ընդառաջելու համար ժողովուել էին Օգոստափառ ընդհանուր նահանգապետի ներկայացուցիչը գեներալ-մայոր Մերչանսկին, Մոսկուայի միտրոպոլիտի կողմից—Մոժայսկի եպիսկոպոսը, քաղաքագլուխը և աւագ ոստիկանապետը։

ՕԴԵՍՍԱ, 2 մայիսի.—Սուլթանի արտակարգ դեսպանութիւնը ժամանեց և երեկոյեան Մոսկուա է գնում։

ՊԵԱՏԻԳՈՐՍԿ.—Մայիսի 1-ից բացուած է բժշկական սեզոնը։

ԲԱԳՈՒ.—Նաւթ արդիւնաբերողների ժողովը ի յիշատակ թագադրութեան որոշեց՝ երեք ուսումնարան և մի լսարան հիմնել ժողովրդական ընթերցանութեան համար. դրա համար յատկացնել միանգամից 17 հազար և տարեկան 6 հազար րուբլի, իսկ հանքային գըլբային—10 հազար րուբլի տարեկան։

ՀՌՈՄ.—Մասսովայից հաղորդում են. «Զինուորական դատարանը մեղադրական վճիռ կայացրեց գեներալ Բարատիերիի դէմ։ Մայոր Զալցան դեռ գերի է Մենելիքի մօտ»։

ՍՈՖԻԱ.—Իշխանուհին իշխանազնների հետ ժամանեց այստեղ. Նրան դիմաւորեցին իշխանը, միտրոպոլիտները, սենատի անդամները, զինուորական պաշտօնեաներն և քաղաքի տիկինները, որոնք նրան ծաղկեփունջ մատուցին։ Փողոցներում խռնուած ժողովուրդը իշխանուհուն ողջունում էր ուրախական բացականչութիւններով։

Իշխանը Մոսկուա կըմեկնի մայիսի 2-ին, նոյնպէս գնում է առանձին պատգամաւորութիւն թագադրութեան ալբոմը ներկայացնելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 մայիսի.—Կալուածական բանկի 3-րդ փոխառութեան տիրաժը։ Գլխաւոր գումարները տարան՝

200,000 ր.—5819/7։ 75,000—
1486/49, 40,000 — 2149/12։
25,000 — 782/27։ 10,000.
14477/36, 5827/45, 948/31.
8,000։ — 9777/17, 11542/14,
612/49, 14626/6, 8388/42։
5,000--3975/6,11617/25,9614/12,
12066/31, 10104/12, 11758/19,
15168/50, 5325/39 — 1000։
11075/14, 7559/43, 13481/36,
7393/7,4682/8,12385/9,6331/10,
2897/17, 13190/45, 11051/6,
11049/8, 7528/44, 9160/24,
4769/50, 1632/12, 7812/44,
2782/22, 46 ,15/16947/3, 527/5.

Խմբագիր հրատարակիչ՝

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Խնդրում են հրատարակել հետևեալը. «Նորընծայ Յովսէփ քահանայ Արայեանցը իւր անդրանիկ պատարագը պիտի մատուցանի վաղը, կիրակի, մայիսի 5-ին, Թիֆլիսի Կաթուղիկէ ս. Գէորգ եկեղեցում, ուր երկար տարիներ ծառայել է դպրական և սարկաւագութեան պաշտօններով։ Ս. պատարագը կսկսուի առաւօտեան ժամը $10^{1}/_{2}$-ին»։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽԱՐԿՈՎ։ ԵԿԱՏԵՐԻՆՈՍԼԱՎՍԿԱՅԱ փող.—Առաջնակարգ երկու հիւրանոցներ «ՌՈՅԱԼ» և «ՌՈՍՍԻԱ» միացած են։ Վերելակ-մեքենայ դէպի բոլոր յարկերը։ Մաքուր խոհանոց։
(М.) 8—5

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
Հարկաւոր է գործակատար հմուտ ԳԱԼԱՆՏԵՐԷՅՆԻ առևտրի գործում (спеціалистъ)։ Դիմել
БАКУ Бр. Малхасянцъ.
(447) 10—3.

ՍԱՆՏԱԼ ՄԻԴԻ
SANTAL MIDY
Պարիզի դեղագործի պատրաստած, թոյլատրուած է Ռուսիայում։
Նոր կապսիւլների մէջ պարունակում են մաքուր սանտալի էսսէնցիա։
Պահեստն է Ռուսիայի գլխաւոր դեղատներում։
(М.) 33—7

ԻՒՂԵՒՓՈՇԻ
ԵՐԿԱԹԷ ԻՐԵՐ ՄԱՔՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ՄՈՍԿՈՒԱՅԻ Ռ. ԿԵՕԼԵՐ և ԸՆԿ.
գործարանի, ծախւում է ԱՄԵՆ ՏԵՂ ԲՈԼՈՐ աւելի նշանաւոր վաճառականների մօտ։
ԱՅՍ ԳՈՐԾԱՐԱՆԻ իւղով և փոշով մաքրուած երկաթէ իրերը այնպէս ողորկւում և փայլ են ստանում, ինչպէս չէին եղել նոր եղած ժամանակն անգամ։ Սակայն պէտք է զգուշանալ, որ սրանց նման ուրիշ իւղ ու փոշի չառնեն, որովհետև վատ յատկութիւն ունեցող իւղի, կամ որ գլխաւորն է խոնաւ օդի մէջ ինքն իրեն փչացած Վիեննայի կրի (այսինքն չէրծած, փոշի չդարձրած) գործածութիւնը ձեռնտու լինելով չափազանց խարդախ է և գործ է ածւում խիստ յաճախ. մինչդեռ յայտնի է, որ այդպիսով փոխուած կիրը բոլորովին կորցրել է իւր ազդեցութիւնը։
(М.) 3—2.

ՍԵՒ ՈՒ ՍՊԻՏԱԿ ՊՂՊԵՂ
ծեծած, ծակոտէն ունեցող թիթեղեայ արկղիկների, նոյնպէս և սրուակների մէջ սեղանի համար, $^{1}/_{32}$-ից մինչև 1 ֆունտ,
ՄՈՍԿՈՒԱՅԻ Ռ. ԿԵՕԼԵՐ և ԸՆԿ
գործարանից, ծախւում է ԱՄԵՆ ՏԵՂ ԲՈԼՈՐ աւելի նշանաւոր վաճառականների մօտ։
Ծեծած պղպեղի խառնուրդն այնպիսի մի սովորական երևոյթ է և այն աստիճան անցել է սահմանից, որ պատրաստի ծեծած պղպեղը յաճախ աւելի էժան է ծախւում, քան չծեծածը։ Իսկ Ռ. Կեօլեր և Ընկ. ապրանքը, ինչպէս ամենքին յայտնի է, կատարեալ երաշխաւորութիւն է ապրանքի մաքրութեան։
(М.) 3—2

ГУСТАВЪ ШТЫРМЕРЪ
20 коп.
ОДИНЪ КУСОКЪ
П—А—Л—Ь—М—И—Р—А
ПАЛЬМИРА
ТРИ КУСКА
50 коп.
ВАРШАВА

М.) 50—6

Գործակալութիւնս յանձն կ'առնէ, պատրաստել աղօրիքի շէնքի և մեքենաներու ծրագիրներ նոր-գրութեամբ և հին քարի գրութեամբ։
Կըհայթայթենք ջամաքային մեքենաներ, ցորենի և հաճարի հարաձի աղօրիներու ամէն գործիները և կրատանձները անոնց շինութիւնը։
Գործակալութիւնս իւր ծրագիրները խորհրդատու ճարտարապետներու քննութեան կենայ յանձնել ի հարկին։
[illegible]
ԴԻՄԵԼ
H. Pashaian et Courian, 12 Croydon Grove 12, West Croydon, London. 50—17